ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ

15 փետրվարի 2017 թվականի N 26-Ա

Վ. ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին և 167-րդ հոդվածի 3-րդ մասերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 325-Ա որոշումը, ինչպես նաև *Վ. Աբգարյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Վարվառա Աբգարյանին*** տրամադրել *2016* թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 15 աշխատանքային օրը, 2017 թվականի փետրվարի 20-ից մինչև մարտի 13-ը ներառյալ:

2. ***Վարվառա Աբգարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ ***Արմանուշ Կարապետյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի փետրվարի 15
ք. Հրազդան